ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհրդի 08.09.2021թ. թիվ 169 նիստի

Օրակարգ.

1. Դասապրոցեսի կազմակերպման վերաբերալ առցանց և օֆլայն տարբերակներով
2. «Սոցիալական դեպքի վարում. մեթոդաբանական ուղեցույց» ձեռնարկի երաշխավորումը հրատարակման
3. Մագիստրոսական ծրագրերի փոխակերպում մեկ ուսումնական տարվա ձևաչափով
4. Այլ հարցեր:

Լսեցին 1. Դասապրոցեսի կազմակերպման վերաբերալ առցանց և օֆլայն տարբերակներով:

Ելույթ ունեցան. Հ.Վերմիշյանը, Ա. Մկրտիչյանը, Ա. Խուրշուդյանը, Յ.Մելքումյանը, Ա. Խաչատրյանը:

Որոշեցին. Ելնելով կատարված ուսումնասիրությունից, որի համաձայն ֆակուլտետի տարբեր կուրսերի ուսանողները նախընտրել են առցանց և օֆլայն տարբերակը՝ հաստատել առցանց տարբերակով դասապրոցեսին մասնակցող հետևյալ կուրսերի ցանկը.

- Սոցիոլոգիա 4-րդ կուրս
- Սոցիալական աշխատանք 4-րդ կուրս
- Սոցիալական քաղաքականություն և վարչարարություն մագ 2
- Սոցիալական քաղաքականություն և վարչարարություն մագ 1 - միայն հինգշաբթի
- Մարդկային ռեսուրսների կառավարում մագ 2
- Մարդկային ռեսուրսների կառավարում մագ 1 - միայն շաբաթ
- Հասարակայնության հետ կապեր մագ 2

- Հասարակայնության հետ կապեր մագ 1 - միայն երեքշաբթի
- Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն մագ 1- միայն ուրբաթ

Լսեցին 2. «Սոցիալական դեպքի վարում. մեթոդաբանական ուղեցույց» ձեռնարկի երաշխավորումը հրատարակման:

Ելույթ ունեցան՝ Ա. Մկրտչյանը, Ա. Խաչատրյանը, Հ. Վերմիշյանը, Մ. Յարմալոյանը, Յու. Մելքումյանը:

Որոշեցին. Հրատարակման երաշխավորել «Սոցիալական դեպքի վարում. մեթոդաբանական ուղեցույց» ձեռնարկը:

Լսեցին 3: Մագիստրոսական ծրագրերի փոխակերպում մեկ ուսումնական տարվա ձևաչափի:

Ելույթ ունեցան. Ա. Մկրտիչյանը,Ա. Խաչատրյանը, Ա. Աթանեսյանը, Ն. Մելքոնյանը, Ա. Խուրշուդյանը:

Որոշեցին 1: Ծրագրավորել Ֆակուլտետի բոլոր մագիստրոսական ծրագրերը՝ 1 տարի տևողության հաշվարկով:

Որոշեցին 2: Այդ նպատակով ստեղծել աշխատանքային խումբ ֆակուլտետի դեկանի, ամբիոնների վարիչների և մագիստրոսական ծրագրերի ղեկավարների մասնակցությամբ:

Որոշեցին 3: Մագիստրոսական ծրագրերի փոխակերպման գործընթացը իրականացնել և ավարտել մինչև 2022-23թթ. ուս. տարի:

Նիստի նախագահ՝ Ա.Ե. Մկրտիչյան

Քարտուղար՝ Ա.Վ. Աթանեսյան